20 նոյեմբերի, 2015թ.

Հանրաքվեի նախապատրաստական գործընթացում

վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ

ամփոփագիր

1-16 նոյեմբերի, 2015թ.

2015թ. հոկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» որոշումը, որի հիման վրա ՀՀ նախագահը 08.10.2015թ. հրապարակեց հրամանագիր՝ հանրաքվեի օր նշանակելով 2015թվականի դեկտեմբերի 6-ը: Հանրաքվեի պաշտոնական քարոզարշավը մեկնարկեց 2015 թվականի հոկտեմբերի 10-ից:

Սույն ամփոփագրում ներառված են տեղեկություններնոյեմբեր ամսվա առաջին կեսին հանրաքվեի քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսի ակնհայտ կամ հնարավոր օգտագործման վերաբերյալ:

1. Նոյեմբերի առաջին տասնօրյակում շարունակվել են ընտրողների թվի անհամապատասխանությունների վերաբերյալ փորձագետների բացահայտումները ու մամուլի հրապարակումները և դրանց ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության պաշտոնական պարզաբանումները: Մասնավորապես, ՀՀ ոստիկանությունն Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) և ՀՀ ընտրողների ռեգիստրի տվյալների միջև մոտ 300,000-ի հասնող անհամապատասխանությունը[1] բացատրել է երկրից մեկ տարուց ավելի բացակայողների տվյալները ԱՎԾ հրապարակումներում չներառելու, այսինքն՝ միայն մշտական բնակչության թիվն ընդգրկելու հանգամանքով:Ընտրողների քանակի աճն՝ ի հակադրություն բնակչության թվի նվազման, իսկ որոշ դեպքերում՝առաջինի ավելի մեծ լինելը բացատրվել է նրանով, որ ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն,ընտրացուցակներում պահպանվումեն Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող քաղաքացիների անունները, քանի որ ոստիկանությունն իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ օտարերկրյա պետությունում գտնվող և տվյալ համայնքում հաշվառում ունեցող անձին հանելու ընտրողների ցուցակներից:[2]
2. Նոյեմբեր ամսվա առաջին կեսին, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ կազմակերպությունները, ինչպես նաև լրատվամիջոցները ստացել են բազմաթիվ ահազանգեր, որ հանրապետության տարբեր դպրոցներում և մանկապարտեզներում իրականացվում է քարոզչություն և ցուցակագրում են աշխատակիցներին ու նրանց

[1]http://galatv.am/hy/anatylitcs/3-302-424/, http://www.ilur.am/news/view/50365.html

[2]http://www.police.am/news/view/p71115.html

հարազատներին և սահերի ծնողներին՝ «այո»-ի ձայներ ապահովելու համար:[3] Այս խնդիրը հնչեցվել է նաև ԱԺ նիստում և պահանջվել է ներկայացնել բացատրություններ ՀՀ կրթության և գիտության նախարարից:[4]

3. Նոյեմբերի 3-ին Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկմանը մասնակցած Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը լրագրողներին վստահեցրել է, որ դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեում «այո»-ի ամենաբարձր ցուցանիշը հենց իր մարզն է ապահովելու և ինքը կորոշի՝ քանի տոկոս:[5] Լրագրողների հետ զրույցում «այո»-ի հաղթանակի մասին վստահեցումներ են արել նաև Շիրակի մարզպետ Ցելիխս Ցոլակյանը, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը:[6]

4. Նոյեմբերի 3-ին 1in.am կայքում հրապարակվել է մի նյութ,ըստ որի՝ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավար Գագիկ Սարգսյանը հայտնել է, որ իրենց գյուղում ընտրողների 80-90 տոկոսը քվեարկելու է սահմանադրական փոփոխությունների օգտին, ինչպես նաև բացառել է Առինջում «ոչ»-ի շտաբի ձևավորումը:[7]

5. Նոյեմբերի 5-ին Կոտայքի մարզի Բուժական գյուղում «Նոր Հայաստան» ընդդիմադիր միավորման ծրագրած հավաքը չի կայացել:Ըստ միավորման ղեկավարներից մեկի տեղեկության՝ իրենց այցից առաջ գյուղում «աշխատել են» իրավապահները և տուն առ տուն այցելելով՝ ճնշում են գործադրել՝ չմասնակցելու միջոցառմանը:[8]

6. Նոյեմբերի 6-ին Մեղրիում «Թրանսֆարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ կազմակերպել է սահմանադրական փոփոխություններին նվիրված իրազեկման քննարկում, որին կեսից միացել է նաև Մեղրիի քաղաքապետը և հայտարարել, որ ժողովուրդը իրազեկ է և որևէ լրացուցիչ բացատրության կամ մեկնաբանության կարիք չունի, և քանի որ ինքն է ընտրված քաղաքապետը և իր համայնքի բնակիչները կքվեարկեն այնպես, ինչպես ինքը կասի: Քաղաքապետի ճնշող ներկայության և հրապարակային հայտարարած այս դիրքորոշման արդյունքում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության Մեղրի քաղաքի երեքմասնակիցներ, ովքեր նախապես գրանցվել էին հանրաքվեի ժամանակ դիտորդություն անելու պատրաստակամությամբ, հանդիպումից մի քանի ժամ անց հրաժարվել են այդ առաքելությունն իրականացնել:

7. Ըստ «Ազատություն» ռադիոկայանի նոյեմբերի 6-ի թողարկման, հայտնի է դարձել, որ ՀՀ վարչապետից ու մարզպետներից բացի, «այո»-ի քարոզարշավին մասնակցելու են նաև ՀՀԿ-ական նախարարները. իրենց պնդմամբ՝ բացառապես երեկոյան ժամը 6-ից հետո: Մասնավորապես, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նախատեսում է «այո» քարոզչություն անել «իր տարածքում»՝ Գեղարքունիքի մարզում: Իսկ ՀՀ կրթության և գիտության նախարար, «այո»-ի կենտրոնական շտաբի անդամ Արմեն Աշոտյանը 2015թ. նոյեմբերի 6-ից սկսել է վարել հանրային հեռուստաընկերության նոր՝ «Եռանկյունի» քաղաքական բանավեճի հաղորդաշարը, որի առաջին հաղորդումը եղել է

---

[3] http://armtimes.com/hy/read/73533, http://top-news.am/7/1/news/54824.html, http://top-news.am/7/1/news/54824.html, http://www.aravot.am/2015/11/13/628512/, http://www.aravot.am/2015/11/10/627337/ , http://www.aravot.am/2015/11/11/627922/

[4] http://www.ilur.am/news/view/50629.html

[5] http://www.azatutyun.am/content/article/27343063.html

[6] http://armtimes.com/hy/read/73151

[7] http://www.1in.am/1760043.html

[8] http://www.azatutyun.am/content/article/27347055.html

սահմանադրական հանրաքվեի քարոզչության թեմայով:[9]Վերջինիս արդյունքում ՁԼՄ-ներով, մասնավորապես հանրային հեռուստաընկերության եթերում, քարոզչության անհավասար պայմանների կապակցությամբ հայտարարությամբ հանդես է եկել Հայ ազգային կոնգրես կուսակցությունը[10] և ներկայացրել բողոք Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին,[11] իսկ Եվրոպայի խորհրդի փորձագետ Լորան Ռույը բացարձակապես անընդունելի է համարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա.Աշոտյանի կողմից հանրաքվեի քարոզարշավի ժամանակահատվածում քաղաքական հաղորդում վարելու փաստը ընդունված չափանիշների և լավագույն փորձի տեսանկյունից:[12]

8. Նոյեմբերի 6-ին «ԳԱԼԱ» հեռուստաընկերության կայքում հրապարակվել է նյութ, ըստ որի ահազանգեր են ստացվել մի շարք գյուղերում ցուցակագրումներին կատարվում՝ գյուղացիների անուն-ազգանունների դիմաց հորդորելով գրել «այո»: Ղարիբջան և Գետք համայնքների ղեկավարները հավաստիացրել են, որ ցուցակագրումն իրականացվել է Շիրակի մարզպետի հանձնարարությամբ՝ գյուղերը գազաֆիկացնելու և ոչ թե սահմանադրական փոփոխությունների համար, ինչը հաստատել է նաև մարզպետը: Սակայն հարկ է նշել, որ 7 գյուղ20 տարի շարունակ դիմել են իրենց գյուղերի գազաֆիկացման համար, սակայն հարցը փորձում են լուծել սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի նախաշեմին:[13]

9. Եվրոպական քոլեջի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Լիլյա Աբրահամյանը և գրող Նարինե Կոյանը համապատասխանաբար նոյեմբերի 7-ին և 8-ին իրենց ֆեյսբուքյան էջերում կատարել են գրառումներ այն մասին, որ իրենց բնակարաններ այցելել են անծանոթ, ովքեր ներկայացել են որպես բնակքաժնի կամ քաղաքապետարանի աշխատակիցներ և հարցրել են, թե արդյոք տանը կան պետական աշխատողներ որպեսզի նրանց «ասեն, թե ում ընտրեն», հետաքրքրվել են, թե հանրաքվեին ինչպես են քվեարկելու, որպեսզի ««ոչ» ասողների հետ աշխատանք տանեն»:[14]Լիլյա Աբրահամյանը նոյեմբերի 9-ին նորից գրառում է կատարել այն մասին, որ նույն անձը խնդրել է տեղեկացնել, թե արդյոք ինքը 100%-անոց «այո» է, քանի որ ինքը պետք է ներկայացնի այդ տվյալները, իսկ Աբրահամյանի դիտարկումից հետո, թե ինքը 5000 դրամ է ուզում, ցուցակում նշում է կատարել «այո-փող»:[15]

10. Նոյեմբերի8-ին«Առավոտ» օրաթերթը հաղորդել է, որ ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող Մալաթիա բժշկական կենտրոնի աշխատակիցները տնօրինության կողմից հանձնարարություն են ստացել տասական ձայն հավաքել դեկտեմբերի 6-ին սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օգտին: Հանձնարարությունը կատարելու համար աշխատակիցներին հատուկ բլանկեր են բաժանել, պահանջել բլանկերում գրառել անուն, ազգանուններ եւ անձնագրի համար:[16]

---

[9]http://www.azatutyun.am/content/article/27349562.html

[10]http://www.ilur.am/news/view/50391.html

[11]http://www.hraparak.am/?p=93777&l=am/hhk-n+arajin+e+erkir+mediayi+e%D6%82+shanti+isk+hak-y%D5%9D+armeniayi+ev+h2-i+eterum+

[12]http://www.azatutyun.am/content/article/27358038.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook

[13]http://galatv.am/hy/news/129276/

[14]https://www.facebook.com/narine.kroyan?fref=nf, https://www.facebook.com/lilia.abrahamyan.9

[15]https://www.facebook.com/lilia.abrahamyan.9/posts/10153740604019824?pnref=story

[16]http://www.aravot.am/2015/11/08/626755/, http://www.1in.am/1765413.html

11. Նոյեմբերի 8-ից հրապարակվել է մի տեսահոլովակ, որում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանհանմիջականորեն մասնակցում է «այո»-ի քարոզչությանը:[17]Չնայած որ դրանով«Հանրաքվեի մասին» օրենքը ֆորմալ առումով չի խախտվում, սակայն ՀՀ պաշտպանության նախարարի խոսքը կարող է ուղղակիորեն ազդել զինծառայողների կարծիքի ազատ ձևավորման և կամարտահայտման վրա:[18]
12. Նոյեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովը հաստատել է նույնականացման քարտերով քվեարկություն նախատեսող օրինագիծը:[19]Կրկնաքվեարկությունը բացառելու համար վերահսկողության լրացուցիչ մեխանիզմներ ներդնելու ընդդիմության ներկայացրած բազմաթիվ առաջարկներից նախագծի հեղինակները ընդունել են միայն երկուսը. համաձայնել են քվեարկության օրը ընտրողների ցուցակի լրացուցիչ նշումների այունակում նշել, որ քաղաքացին քվեարկել է նույնականացման քարտով, իսկ քվեարկության արդյունքների արձանագրություններում հաշվարկել և նշել նույնականացման քարտով քվեարկողների թիվը:[20] Այդուհանդերձ, քանի դեռ ընտրողների ցուցակները մնում են գաղտնի, այս տվյալները ստուգման և համադրման չեն կարող ենթարկվել և, ըստ էության, այս մեխանիզմները որևէ նշանակություն չեն կարող ունենալքվեարկության վերահսկողության և արդյունքների արժանահավատության առումով:
13. Նոյեմբերի 11-ին Հելսինկյան ասոցացիայի նախագահ Միքայել Դանիելյանը հայտնել է, որ այցելություններ են կատարվում քաղաքացիների բնակարաններ՝ նրանց առաջարկելով փոխել անձնագրերը և խոստանալով իրենց վրա վերցնել ծախսերը:[21]
14. Նոյեմբերի 12-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամները քարոզչություն իրականացնելու նպատակով մեկնել են Արմավիրի մարզի Քարակերտ համայնք, սակայն գյուղ մտնող միակ ճանապարհը ողջ լայնքով փակված է եղել ցեմենտի պարկերով:Գյուղապետի մեկնաբանությամբ, դրանք շարվել են ճանապարհին շինարարության աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով, սակայն արդյունքում խոչընդոտվել է ընդդիմության կազմակերպած միջոցառումը:[22]
15. Նոյեմբերի 13-ին հրապարակվեցին Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ուսումնասիրության տվյալները, որոնք բացահայտեցին հակասություններ ընտրացուցակներում՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը: Մասնավորապես, պարզվեց, որ մոտ 5400 ընտրող գրանցված են ընդամենը 58 հասցեում, 4700 ընտրող չունի հասցե, իսկ ավելի քան 37300 հոգի չունի ծննդյան օր և ամսաթիվ:[23]
16. Նոյեմբերի 13-ից «Արմնյուզ» հեռուստաընկերությունով և «Ա1+» ինտերնետային կայքով հեռարձակվում է Հայաստանի հյուսիսային և հարավային մարզերում ռեալիթի շոուի ձևաչափով կազմակերպված «Այո & Ոչ» հաղորդումը: Հանդիպումների ընթացքում արձանագրվել են դեպքեր, որ ի պատասխան բնակիչների կողմից բարձրաձայնված խնդիրների, «Այո»-ի կողմնակիցները տվել են այդ խնդիրները լուծելու խոստումներ: Մասնավորապես, Մեղրի քաղաքում ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Կարինե Անեմյանը խոստացել է բարձրաձայնել

[17]https://www.facebook.com/409027245925029/videos/482099295284490/?fref=nf

[18]http://www.azatutyun.am/content/article/27356494.html

[19]http://www.azatutyun.am/content/article/27357985.html

[20]http://www.azatutyun.am/content/article/27356430.html

[21]http://galatv.am/hy/news/129175/

[22]http://armtimes.com/hy/read/73787

[23]http://elections.transparency.am/2015/index.php?am_population2001-2015,36

բնակիչների գազի խնդիրը, իսկ նույն խմբակցության պատգամավոր Վարդան Այվազյանը առաջարկել է կազմակերպել արտադրություն:[24] Հարկ է նշել, որ բարոզչության ժամանակ խոստումներ տալն արգելված է «Հանրաքվեի մասին» օրենքի 20-րդ 11-րդ մասի «բ» կետի և ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն և առաջացնում է վարչական պատասխանատվություն:

17. Նոյեմբերի 14-ին «Այո &Ոչ» ռեալիթի շոուի ժամանակ Ապարան է ժամանել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի և ՀՀ բաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանի ուղեկցությամբ: Նա հայտարարել է, որ եկել է օգնելու այն մարդկանց, ովքեր տուժել են նախորդ գիշեր տեղի ունեցած բամուց ու անձրևից: Վարչապետը շփվել է տարածաշրջանի համայնքապետերի ու շարքային բաղաքացիների, ինչպես նաև ռեալիթի շոուի մասնակիցների հետ:[25] Հայաստանում բնականոն երևույթ են գարնանային և աշնանային բամիները, որոնց դեպքում նաև երբեմն մեծ վնասներ են հասցվում բնակավայրերին, սակայն միշտ չէ, որ վարչապետը այցելում է այդ բնակավայրերը: Տվյալ դեպքում Հ.Աբրահամյանը մեկնեղել է իր վարչապետական ու «այո»-ի բարոզարշավի կենտրոնական շտաբի ղեկավարի պարտականությունները:

[24] http://hraparak.am/?p=94032&l=am%2F

[25] http://www.a1plus.am/1417247.html